ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ

ՈՐՈՇՈՒՄ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

(բողոք թիվ 1/8619-21)

ք. Երևան 03.12.2021թ.

Մարդու իրավունքների և ազատությունների ենթադրյալ խախտման մասին բողոքի քննարկման ընթացքը և ձեռնարկված միջոցները.

1. «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ նախագահ Շուշան Դոյդոյանը 2021 թվականի օգոստոսի 30-ին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած բողոքով բարձրացրել է տեղեկատվություն տրամադրելու իր հարցմանն ի պատասխան՝ Երևանի քաղաքապետարանից ոչ պատշաճ և ոչ սպառիչ տեղեկություններ տրամադրելու հարցը:

2. Պաշտպանի որոշմամբ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ նախագահ Շուշան Դոյդոյանի բողոքն ընդունվել է քննարկման:

3. Բողոքի քննարկման շրջանակներում Պաշտպանը համապատասխան պարզաբանումների պահանջով գրություններ է ուղարկել Երևանի քաղաքապետարան:

Երևանի քաղաքապետին հասցեագրած գրություններով Պաշտպանը պահանջել է «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի նախագահ Շուշան Դոյդոյանի հարցումներին տրամադրել պատշաճ տեղեկություններ, ինչպես նաև խնդրել է պարզաբանել, թե ինչ հիմնավորմամբ այդ հարցումներին պատշաճ պատասխաններ չեն տրամադրվել:

Մարդու իրավունքների և ազատությունների խախտում արձանագրելու համար նշանակություն ունեցող հանգամանքները

4. Շուշան Դոյդոյանը Սիլիկյան թաղամասի հին խճուղի հ. 60/1 հասցեին կից, համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի վրա կառուցված շինության՝ քարի արտադրամասի վերաբերյալ տեղեկատվության հարցում է ուղարկել Երևանի քաղաքապետարան, սակայն պատշաճ տեղեկություններ չի ստացել:

5. Շուշան Դոյդոյանը 2021 թվականի օգոստոսի 12-ին Երևանի քաղաքապետարան է ներկայացրել հարցում հետևյալ բովանդակությամբ՝

1) «խնդրում ենք տեղեկացնել, թե ո՞ր մարմնի լիազորությունն է համայնքի հողին պատկանող տարածքում անօրինական գործող արտադրամասի գործունեության կասեցումը կամ դադարեցումը,

2) քարի արտադրամասի տնտեսվարողն (Միքայել Սերգեյի Ղազարյան Ա/Ձ-ն) ունի արդյոք համայնքային հողի օրինական օգտագործման կամ վարձակալության պայմանագիր Երևանի քաղաքապետարանի կամ Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի հետ կնքված, թե նա պարզապես զավթել է համայնքին պատկանող հողը,

3) ինչու՞ է Երևանի քաղաքապետարանը դրսևորել անգործություն և անգամ հեղափոխությունից հետո՝ մինչև 2021 թվականի ապրիլի 30-ը, համայնքին պատկանող հողի վրա 10 տարուց ավել անօրինական գործունեություն ծավալող քարի արտադրամասը չի քանդել կամ ապամոնտաժել»:

6. Շուշան Դոյդոյանը Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած դիմումին կից ներկայացրել է Երևանի քաղաքապետարանից 2021 թվականի օգոստոսի 19-ին իրեն ուղղված թիվ 19/102668 գրությունը: Շուշան Դոյդոյանին նշյալ գրությամբ պարզաբանվել է, որ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Երևան քաղաքի Կենտրոն, Նորք-Մարաշ և Էրեբունի-Նուբարաշեն վարչական շրջանների բաժնի պետի կողմից Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարին հասցեագրված 29.07.2021 թվականի հ.եա-4631/02 գրությամբ Երևանի քաղաքապետարան է ուղարկվել Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ բաժնի ավագ հարկադիր կատարողի որոշումը՝ պարտապանին որոշակի գործողություններ կատարելուն պարտադրելու կամ որոշակի գործողությունների կատարումից ձեռնպահ մնալուն հարկադրելու մասին: Հարկադիր կատարողի այդ որոշման համաձայն՝ «Ի կատարումն ՀՀ

վարչական դատարանի թիվ ՎԴ/5941/05/21 վարչական գործով 28.07.2021 թվականին տրված կատարողական թերթի՝ արգելվել է Երևանի քաղաքապետարանին Երևանի քաղաքի Սիլիկյան հին խճուղու հարևանությամբ գտնվող շինության քանդումը և/կամ ապամոնտաժումը»:

7. Բողոք ներկայացրած անձը, Երևանի քաղաքապետարանից չստանալով ըստ էության պատասխան, ղեկավարվելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով, նույն օրը՝ 2021 թվականի օգոստոսի 19-ին, նույն հարցադրումներով կրկնակի հարցում է ուղարկել Երևանի քաղաքապետարան:

8. «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ նախագահ Շուշան Դոյդոյանի տեղեկացմամբ՝ իր՝ 2021 թվականի օգոստոսի 19-ի հարցման պատասխանը Երևանի քաղաքապետարանը նույն թվականի օգոստոսի 25-ի թիվ 19/105694 գրությամբ բովանդակային առումով կրկնել է:

9. Մարդու իրավունքների պաշտպանի գրությանն ի պատասխան՝ Երևանի քաղաքապետարանը 2021 թվականի հոկտեմբերի 15-ին թիվ 01/07-127017h գրությամբ պատասխանել է.

- «Երևան քաղաքի Սիլիկյան թաղամասի հին խճուղի հ. 60/1 հասցեին կից շինությունները կառուցված են համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի վրա:
- ՀՀ վարչական դատարանի վարութում է գտնվում թիվ ՎԴ/5941/05/21 վարչական գործն ըստ հայցի՝ Միքայել Ղազարյանի ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ նախատեսված բարենպաստ վարչական ակտ ընդունելուն պարտավորեցնելու պահանջի մասին: Դատարանը 28.07.2021 թվականին կայացրել է «Հայցի ապահովման միջոց ձեռնարկելու միջնորդությունը քննության առնելու մասին» որոշումը, որով արգելել է Երևանի քաղաքապետարանին Երևան քաղաքի Սիլիկյան թաղամասի հին խճուղու հարևանությամբ շինության քանդումը և (կամ) ապամոնտաժումը:
- Երևանի քաղաքապետարանը միջնորդություն է ներկայացրել ՀՀ վարչական դատարան՝ կիրառված հայցի ապահովումը վերացնելու մասին, որը դատարանի կողմից մերժվել է:

- Ինչ վերաբերում է արտադրամասի շահագործումը կասեցնելու կամ դադարեցնելու հարցին, ապա նշված գործունեության կասեցումը կամ դադարեցումը Սահմանադրությամբ և օրենքներով Երևանի քաղաքապետարանին վերապահված լիազորությունների շրջանակից դուրս է»:

<u>Մարդու իրավունքների պաշտպանի պատճառաբանությունները և եզրահանգումը.</u>

10. Սույն որոշման շրջանակներում մարդու իրավունքների խախտման հարցը գնահատելու և համապատասխան եզրահանգում կատարելու համար ՀՀ մարդու իրավունքների պաշտպանն անհրաժեշտ է համարում իրավական վերլուծությամբ պատասխանել հետևյալ հարցադրմանը՝

- **արդյոք Երևանի քաղաքապետարանը, «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ նախագահ Շուշան Դոյդոյանի հարցումներին ամբողջական և պատշաճ տեղեկություններ չտրամադրելով, խախտել է Շուշան Դոյդոյանի՝ ՀՀ Սահմանադրությամբ, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով և միջազգային փաստաթղթերով ամրագրված տեղեկություններ ստանալու իրավունքը:**

11. Երևանի քաղաքապետարանի պարզաբանումից պարզ է դառնում, որ քաղաքապետարանն ընդհանրապես չի անդրադարձել քաղաքապետարանին Շուշան Դոյդոյանի ուղղած հարցադրմանը, որը վերաբերում է համայնքին պատկանող հողի վրա 10 տարուց ավելի անօրինական գործունեություն ծավալող քարի արտադրամասի քանդման կամ ապամոնտաժման հարցում դրսևորած անգործությանը: Շուշան Դոյդոյանի հարցն այն մասին է, թե քարի արտադրամասի տնտեսվարողը (Միքայել Սերգեյի Ղազարյան Ա/Ձ-ն) ունի քաղաքապետարանի կամ Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի հետ կնքված համայնքային հողամասի օրինական օգտագործման կամ վարձակալության պայմանագիր, թե նա զավթել է համայնքին պատկանող հողը, քաղաքապետարանն անդրադարձել է ոչ ամբողջական և հարցադրմանն ըստ էության պատասխան չի տրամադրել:

12. ՀՀ Սահմանադրության 51-րդ հոդվածի համաձայն՝ «յուրաքանչյուր ոք ունի պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեության մասին տեղեկություններ ստանալու և փաստաթղթերին ծանոթանալու

իրավունք: Տեղեկություններ ստանալու իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրային շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով: Տեղեկություններ ստանալու կարգը, ինչպես նաև տեղեկությունները թաքցնելու կամ դրանց տրամադրումն անհիմն մերժելու համար պաշտոնատար անձանց պատասխանատվության հիմքերը սահմանվում են օրենքով»:

14. «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը և (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին և ստանալու այդ տեղեկությունը:

15. Նույն օրենքի 12-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկատվության ազատության ապահովման ոլորտում տեղեկատվություն տնօրինողը պարտավոր է տեղեկություններ փնտրող անձին տրամադրել հավաստի և իր տնօրինության տակ գտնվող ամբողջական տեղեկություն:

16. Նույն օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների և կազմակերպությունների կողմից տեղեկության կամ դրա կրկնօրինակի (պատճենի) տրամադրումն իրականացվում է ՀՀ կառավարության սահմանած կարգով:

17. Օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքով նախատեսված դեպքերի, տեղեկություն տրամադրելուց հրաժարվելը կամ ոչ հավաստի տեղեկություն տրամադրելը, ինչպես նաև նույն օրենքով սահմանված կարգի այլ խախտումներն առաջացնում են օրենքով սահմանված պատասխանատվություն:

18. Ի ապահովում վերը նշված կարգավորումների՝ ՀՀ կառավարությունը 2015 թվականի հոկտեմբերի 15-ին ընդունել է «Տեղեկատվություն տնօրինողի կողմից մշակված կամ նրան առաքված տեղեկությունների գրանցման, դասակարգման և պահպանման, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների ու կազմակերպությունների կողմից տեղեկության կամ դրա կրկնօրինակի (պատճենի) տրամադրման կարգը սահմանելու մասին» թիվ 1204-Ն որոշումը: Մասնավորապես, նշված որոշմամբ հաստատված կարգի հավելված 2-ի 8-րդ կետի համաձայն՝ հարցման պատասխանը պետք է լինի հավաստի և լրիվ՝ պարունակելով բոլոր առաջադրված հարցերի հիմնավոր պատասխանները: Դիմողի կողմից մեկից ավելի

հարցերի առաջադրման դեպքում մարմինը հերթական համարակալման միջոցով տրամադրում է բոլոր հարցերի հավաստի և լրիվ պատասխանները:

19. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիային կից թիվ 11 Արձանագրության 10-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ և գաղափարներ ստանալու և տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության և անկախ սահմաններից: Այս ազատությունների իրականացումը, քանի որ այն կապված է պարտավորությունների և պատասխանատվության հետ, կարող է պայմանավորվել այնպիսի ձևականություններով, պայմաններով, սահմանափակումներով կամ պատժամիջոցներով, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, տարածքային ամբողջականության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը, ինչպես և այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկատվության բացահայտումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու նպատակով»:

20. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին դաշնագրի 19-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր մարդ ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք. այդ իրավունքն ընդգրկում է, անկախ պետական սահմաններից, բանավոր, գրավոր կամ մամուլի միջոցով կամ էլ գեղարվեստական ձևով արտահայտված կամ մեկ այլ ձևով սեփական ընտրությամբ ամեն տեսակի ինֆորմացիա ու գաղափարներ պահանջելու, ստանալու և տարածելու ազատությունը: Կոնվենցիան այս դրույթը կարծիքի արտահայտման ազատությունը սահմանում է իբրև տարբեր ուղղություններ ունեցող (պահանջել, ստանալ և տարածել), կարծիքի տեսանկյունից անսահմանափակ (ցանկացած տեսակի ինֆորմացիա և գաղափարներ), առանց սահմանների (անկախ պետական սահմաններից), ձևի առումով ոչ սպառիչ (մամուլի ցանկացած այլ ձևով):

21. ՄԱԿ-ի մարդու իրավունքների հանձնաժողովի «Կարծիքի և արտահայտվելու ազատության իրավունքի խթանման և պաշտպանության մասին» զեկույցի 35-րդ կետի համաձայն՝ հաշվի առնելով ժամանակակից հասարակությունում տեղեկատվության

սոցիալական և քաղաքական նշանակությունը՝ յուրաքանչյուրի տեղեկություններ և գաղափարներ ստանալու իրավունքը պատշաճ կերպով պետք է երաշխավորվի: Այս իրավունքը ոչ միայն տեղեկություններ տրամադրելու իրավունքի հակադարձ կողմն է, այլև ունի ինքնուրույն նշանակություն: Տեղեկություններ փնտրելը կամ ստանալը խոսքի ազատության և կարծիքի արտահայտման իրավունքի էական տարրերից է: Այդ իրավունքը կկորցնի ողջ իմաստը, եթե անձը չունենա հասանելիություն տեղեկատվությանը: Տեղեկատվության հասանելիությունն ընկած է ժողովրդավարական հասարակության հիմքում: Հետևաբար՝ հանրությունից տեղեկություններ թաքցնելու դեպքերը պետք է խստորեն քննության առնվեն:

22. «Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի 1-ին հոդվածի համաձայն՝ «պաշտոնական փաստաթղթեր» նշանակում է ցանկացած ձևով գրանցված, մշակված կամ ստացված և պետական մարմինների կողմից պահվող ամբողջ տեղեկատվությունը:

23. Նույն կոնվենցիայի 2-րդ հոդվածի համաձայն՝ Կողմերը պետք է երաշխավորեն յուրաքանչյուրի իրավունքը՝ հարցման հիման վրա ստանալ պետական մարմինների կողմից պահվող պաշտոնական փաստաթղթեր՝ առանց որևէ հիմքով խտրականության: Կողմերից յուրաքանչյուրն իր օրենսդրությամբ պետք է ձեռնարկի անհրաժեշտ միջոցներ նույն Կոնվենցիայում նկարագրված պաշտոնական փաստաթղթերի հասանելիությունն ապահովող դրույթներն իրականացնելու համար

24. «Տեղեկատվություն ստանալու ազատության մասին» ՀՀ օրենքում և Վարչական իրավախախտումների մասին ՀՀ օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագծերի առնչությամբ «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովը (Վենետիկի հանձնաժողով) նշել է, որ տեղեկատվություն ստանալու իրավունքը պատկանում է յուրաքանչյուրին անկախ ազգային պատկանելիությունից: Դա բխում է Կոնվենցիայի՝ պաշտոնական փաստաթղթեր ստանալու իրավունքն ամրագրող 2.1 կարգավորումից, ըստ որի՝ ցանկացած անձ, առանց որևէ խտրականության, պետք է ունենա պաշտոնական փաստաթղթեր ստանալու համար դիմելու (պահանջի) իրավունք:

25. Պաշտոնական փաստաթղթերի հասանելիության իրավունքը նշվում է նաև «Անդամ պետություններին պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին» Նախարարների Կոմիտեի 2002 թվականի փետրվարի 21-ի հանձնարարականում:

Մասնավորապես՝ դրանում նշվում է, որ անդամ պետությունները պետք է երաշխավորեն յուրաքանչյուրի իրավունքը հարցում կատարելու միջոցով հասու լինելու պետական կառավարման մարմինների կողմից պահվող պաշտոնական փաստաթղթերին: Այս սկզբունքը պետք է կիրառվի առանց որևէ խտրականության: Հանձնարարականով սահմանվում է նաև, որ պաշտոնական փաստաթուղթ հայցողը որևէ պարտավորվածություն չունի հիմնավորելու այդ փաստաթղթին հասու դառնալու իր ցանկությունը[1]:

26. Ժողովրդավարական համակարգի հիմնասյուններից է տեղեկություններ ստանալու և իրազեկված լինելու իրավունքները: Այս իրավունքների շնորհիվ է ապահովվում քաղաքացու վերահսկողությունը պետության նկատմամբ ու հետևաբար՝ դառնում զսպաշապիկ պետության մարմինների կողմից մարդու իրավունքների հնարավոր խախտումների դեմ: Ըստ այդմ, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության կարևոր ուղղություններից է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների՝ տեղեկություններ ստանալու հարցումների պատասխանների տրամադրման որակի, ժամկետների, մերժումների բնույթի ու առհասարակ, այդ հարցումների նկատմամբ հանրային մարմինների վերաբերմունքի հարցերը և դրանց դիտարկումը:

27. Վերոգրյալի հաշվառմամբ՝ Մարդու իրավունքների պաշտպանը սկզբունքային է համարում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների՝ տեղեկություններ ստանալու հարցումների պատասխանների տրամադրման լրիվության, որակի, ժամկետների, մերժումների բնույթի ու առհասարակ, այդ հարցումների նկատմամբ հանրային մարմինների վերաբերմունքի հարցերը:

28. Հանրային մարմինների կողմից նման գործելաոճի դրսևորումները գործնականում կարող են առաջ բերել տեղեկատվության ոչ ամբողջական տրամադրման կամ առհասարակ տեղեկությունների տրամադրման մերժումների շարունակականության ռիսկեր:

29. Ուստի, յուրաքանչյուր պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին պարտավոր է տեղեկություններ ստանալու վերաբերյալ հարցումներին վերաբերվել պատասխանատվությամբ, ապահովել դրանց ամբողջական և պատշաճ տրամադրումը, ինչն էլ իր հերթին կերաշխավորվի ՀՀ Սահմանադրությամբ, օրենքներով և միջազգային փաստաթղթերով ամրագրված տեղեկություններ ստանալու իրավունքի պատշաճ իրացումը:

---

[1] Տես՝ ԵԽ «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողով (Վենետիկի հանձնաժողով), 2009 թվականի մարտի 6-ի կարծիք թիվ 511/2009, հղումը հասանել է հետևյալ հղումով՝ https://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL(2009)019-e :

30. Միևնույն ժամանակ, Պաշտպանը կարևորում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինները տեղեկություններ հայցողներին դրանք փոխանցեն այնպիսի ծավալով, որ այդ տեղեկությունների տրամադրումն այլ անձանց անձնական տվյալների երաշխավորման առումով խնդրահարույց չլինի:

31. «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ մշակողի կողմից տվյալների սուբյեկտին անձնական տվյալների վերաբերյալ տեղեկությունները պետք է տրամադրվեն հասանելի ձևով և չպետք է պարունակեն տվյալներ այլ սուբյեկտի վերաբերող անձնական տեղեկություններ:

32. Խնդրո իրավիճակում Երևանի քաղաքապետարանի կողմից քարի արտադրամասի տնտեսվարողի՝ Միքայել Սերգեյի Ղազարյանի անձնական տվյալները տեղեկատվություն հայցողին հասանելի դարձնելն անձնական տվյալների երաշխավորման տեսանկյունից կարող էր խնդրահարույց լինել միայն այն պարագայում, եթե այդ տվյալներն արդեն իսկ հրապարակային չլինեին և հանրամատչելի աղբյուրներից ձեռք բերել հնարավոր չլիներ: Մասնավորապես, «Դատալեքս» ՀՀ դատական տեղեկատվական համակարգի ուսումնասիրությունից պարզվել է, որ Միքայել Սերգեյի Ղազարյանը *2021 թվականի մայիսի 27-ին* դիմել է ՀՀ վարչական դատարան 29.07.2006 թվականի թիվ 912-Ն որոշմամբ նախատեսված բարենպաստ վարչական ակտ՝ Երևան քաղաքի Սիլիկյան թաղամասի հին խճուղու հարևանությամբ գտնվող շինությունը և դրանով ծանրաբեռնված հողամասն օրինական ճանաչելուն և Միքայել Ղազարյանին իրացնելուն (օտարելուն) պարտավորեցնելու պահանջով: Այսինքն՝ Միքայել Սերգեյի Ղազարյանի անձնական տվյալները որպես այդպիսին արդեն իսկ հրապարակային են եղել մինչև Շուշան Դոյդոյանի կողմից Երևանի քաղաքապետարան Սիլիկյան թաղամասի հին խճուղի հ. 60/1 հասցեին կից համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի վրա կառուցված շինության՝ քարի արտադրամասի վերաբերյալ տեղեկատվության առաջին հարցումն ուղարկելը, այսինքն՝ մինչև 2021 թվականի օգոստոսի 12-ը:

33. Ինչ վերաբերում է ապօրինի հողօգտագործման հարցին, հարկ է վկայակոչել «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, որի համաձայն՝ հողօգտագործման բնագավառում քաղաքապետը կազմակերպում է ապօրինի հողօգտագործման կասեցման և վերացման ուղղությամբ վարչական շրջանի ղեկավարների կողմից կատարվող աշխատանքները:

34. Այսպիսով, վերը նշված իրավական կարգավորումից հետևում է, որ Երևան քաղաքում ապօրինի հողօգտագործման կասեցումը և վերացումը Երևանի քաղաքապետի լիազորությունն է, ուստի նշվածի կապակցությամբ Շուշան Դոյդոյանի հարցման մեջ տեղ գտած հարցադրմանը պատասխանելը նույնպես Երևանի քաղաքապետարանի լիազորությունների շրջանակներում է:

35. **Վերը նշվածի հիման վրա Պաշտպանն արձանագրում է, որ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ նախագահ Շուշան Դոյդոյանի հարցումներին պատշաճ և սպառիչ պատասխան չտրամադրելով՝ Երևանի քաղաքապետարանը խախտել է ՀՀ Սահմանադրությամբ, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով և միջազգային փաստաթղթերով ամրագրված տեղեկություններ ստանալու վերջինիս իրավունքը:**

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և նույն հոդվածի 2-րդ մասով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Հաստատված համարել, որ տեղի է ունեցել Շուշան Դոյդոյանի իրավունքների խախտում:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ նախագահ Շուշան Դոյդոյանի սույն որոշմամբ քննարկված հարցադրումներին տրամադրել պատշաճ և ամբողջական տեղեկություններ:

3. Որոշման մեկական օրինակներն ուղարկել Երևանի քաղաքապետին և բողոք ներկայացրած անձին:

Ա. ԹԱԹՈՅԱՆ